«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Խանում Վահրամյան

Ուսումնական հաստատություն՝ Ճոճկանի Գոռ Խուդինյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Հետազոտական աշխատանք

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում

Հիմնահարց-Ինչպե՞ս են ազդում հեռուստացույցը և համակարգիչը երեխայի առօրյա կյանքին և սովորողի ուսուցման գործընթացին:

Ո՞րոնք են հեռուստացույցի և համակարգչի դրական և բացասական կողմերը:

Նպատակ- Ներմուծել հեռուստացույց,համակարգիչ և սովորող փոխկապակցված հասկացությունը,ցույց տալ հեռուստացույցի և համակարգչի լավ և վատ կողմերը, ձևավորել սովորողի մոտ ժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունները և կարողությունները:Ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը սովորողների հոգեվիճակի վրա, ինչպես նաև զետեղել նյութեր, որոնք կարող են օգնել ուսուցչին,սովորողին և ծնողին:

Բովանդակություն

Ներածություն.....4

Մաս 1 Հեռուստացույցը և սովորողը……..6

1.1 Հեռուստացույցը ուսուցողական հզոր գործիք՝«բարեկամ»……...…6

1.2Հեռուստացույցի բացասաբար ազդեցությունը կամ հեռուստացույցը՝ «թշնամի »….....7

1.2 Խորհուրդ ծնողներին……..……..…13

Մաս 2 Համակարգիչը , համացանցը և սովորողը…….……...…….14

2.1 Համակարգչի(համացանցը) դրական ազդեցությունները……...……..17

2.2 Ինչպե՞ս կարող է տեխնոլոգիան բարձրացնել ուսման որակը……...…….18

2.3 Համակարգչի (համացանցը) բացասական ազդեցությունները……....20

2.4 Խորհուրդներ դեռահասներին և ծնողներին.....22

Մաս3.1 Գիրք, հեռուստացույց, համակարգիչ.....23

3.2 Հին եւ նոր սերունդներ……..……24

Եզրակացություն……..……25

Գրականություն……...……27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորագույն տեխնոլոգիաները մարդկային կյանքի, ողջ հասարակության համար ստեղծել են նոր աշխարհ:Դրանք, հակառակ մեր ակնկալիքներին չեզոք միջոցներ չեն: Դրանք են թելադրում կյանքի ընթացքն ու ուղորդում ճանապարհը: Ներկա դարաշրջանում, մարդ արարածը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը: Քաղաքական, տնտեսական, գեղագիտական, հոգեբանական, բարոյական, կրթական, հասարակական տեսանկյունից տեղեկատվական տեխնոլոգիաների թողած ազդեցության հետևանքները խոր են այնքանով, որ մարդկային կյանքի և հոգու ոչ մի անկյունը զերծ չի մնացել այդ ազդեցությունից: Այսօր ակնհայտ է, որ քաղաքակրթության հետագա զարգացումը կախված է նրանից, թե ինչպես կկառուցվեն մեդիայի և մարդու, մեդիայի և մշակույթի, մեդիայի և կրթության հարաբերությունները: Միայն համատեղ ջանքերի շնորհիվ է հնարավոր լուծել այդ խնդիրները:

Առ այսօր մանկավարժական ասպարեզում չկա մեդիայի կիրառելիության համակարգվածություն, ուսումնասիրված չէ՝ինչ դեր են խաղում էլեկտրոնային միջոցները կրթության և դաստիարակության խնդրում: Հիմնական բարդությունն այն է, որ մանկավարժական արդեն կատարված ուսումնասիրությունները կորցնում են արդիականությունը՝ մեդիամիջոցների արագ փոփոխման հետևանքով: Աշխատանքային եւ սոցիալական միջավայրերի, դրանցում գործածվող տեխնոլոգիաների հաճախակի փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ եւ հմտություններ, պատրաստ լինել շարունակական ուսման: Տեղեկատվական դարաշրջանում կրթության բնույթի մեջ կատարվող արմատական փոփոխությունը սերտորեն առնչված է տեղեկատվության եւ հաղորդակցության արդի միջոցների զարգացման եւ տարածման հետ:

Միայն համատեղ ջանքերի շնորհիվ է հնարավոր լուծել այդ խնդիրները: Ցավոք սրտի, համակարգիչը և, հատկապես՝ համացանցը, աստիճանաբար մեկուսացնում են երեխաներին իրականությունից, տանում դեպի երևակայական, վիրտուալ աշխարհ: Մեր հետազոտական աշխատանքում անդրադարձ ենք կատարել մանկավարժական տեսանկյունից քննարկվող ***հետևյալ խնդրին***՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողների առօրյա կյանքում:

Չնայած վերջին տասնամյակներում գրականության մեջ տեղ գտած բազմաթիվ վերլուծական մի շարք հետազոտական աշխատությունների, անձի սոցիալականացման, հոգեբանական խնդիրներն ու նորագույն տեխնոլոգիաների

ազդեցությունն այդ գործընթացի վրա առայժմ լիարժեք ուսումնասիրված չեն և գիտական հանրության կողմից վիճաբանությունների ու մտորումների առարկա են ողջ աշխարհի մտավորականների համար:

«Որովհետև մահը վեր ելավ մեր պատուհանները, մտավ մեր պալատները, որ բնաջինջ անի երեխային փողոցից, երիտասարդներին՝հրապարակներից»:
(Երեմիա 9. 21)

Սա արդիական է մեր օրերի համար… Համացանցային գրավչություններն ու պղծությունները մտնում են մեր տները՝ «սպանելու» մեր երեխաներին՝ «հենց պատուհաններից»: Հետաքրքրական է, որ Windows բառը նշանակում է «պատուհաններ»… Այսօր այդ պատուհանը համակարգչի, հեռուստացույցի էկրանն է: Այսօր ժամանակները փոխել են ամեն ինչ և իրենց կնիքն անգամ մանկության ու պատանեկության վրա են թողել: Սրանք կյանքի կարեւոր և հիանալի փուլեր են , որոնք մեզանից յուրաքանչյուրը ուրախությամբ և մեծ սիրով է հիշում: Իսկ իսկական մանկությունը լի է ազնվությամբ, մաքրությամբ, պարզությամբ, միամտությամբ, հասարուկությամբ, անհոգ է, ուրախ, առանց պահանջների և կամակորությունների:
Եվ հենց մանուկներն ունեն աշխարհում ամենաթանկ բանը՝ մաքուր հոգի ու միտք: Նախկին բակային եւ մանկական խաղերին փոխարինելու են եկել հեռուստացույցը, համակարգիչը, բջջային հեռախոսն ու պլանշետը, համացանցը... Հետաքրքրություններն այսօր փոխվել են, և ոչ միայն դեպի դրականը: Այժմ երեխաներին հետաքրքրում են համակարգչային խաղերն ու շփումները սոցիալական կայքերում: Քսանմեկերորդ դարում մանկություն հասկացությունը մեղմ ասած այլ կերպ է ընկալվում: Այժմ երեխաների մեծ մասը իր մանկությունն անցկացնում է համակարգիչների, հեռախոսների և հեռուստացույցների առաջ: «Տեղեկատվական դարաշրջանի» երեխաները ծնվում են բազմաբնույթ տեղեկատվությամբ ծանրաբեռնված միջավայրում, որ սփռում են տարբեր տեսակի տեղեկատվական տեխնոլոգիաները :

Մաս 1

Հեռուստացույցը և սովորողը

«Եթե հեռուստաէկրանը գնդակոծում է անհրաժեշտ ռազմամթերքով անհրաժեշտ մարդկանց,ուրեմն այն լավն է»:

Մարշալ Մաքկլուեն

1. ***Հեռուստացույցը ուսուցողական հզոր գործիք՝«բարեկամ»***

Բոլորիս ընտանիքներում իր պատվավոր տեղն է զբաղեցնում հեռուստացույցը՝ որպես մեր կենցաղի ամենօրյա ուղեկից: Այն կլանում է թե' մեծերին, թե' փոքրերին: Հաղորդումներ, ֆիլմեր, մուլտեր, տեսահոլովակներ, գովազդ... Հեռուստացույց դիտելը դարձել է այնքան հարազատ բան, որ մենք նույնիսկ կասկածի տակ չենք դնում նրա օգտակարությունը/վնասակարությունը: Ինչպես երթեւեկության մեջ կան կանոններ, որոնց անհրաժեշտ է հետեւել մեր կյանքի ապահովության եւ անվտանգության համար, այնպես էլ հեռուստացույց դիտելիս կան մի շարք սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրառել երեխայի (սովորողի) հոգեկան (եւ ոչ միայն) առողջության պահպանման համար: Հեռուստատեսության առավելությունն այն է, որ նա «պատուհան է դեպի աշխարհ», դիտողին կապում է աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների հետ, ինչ-որ իմաստով դարձնում է դրանց մասնակիցը: Նա ուղղորդում է մարդկանց գիտակցությունը երկրագնդի, ամբողջ մարդկության, մեր շուրջը կատարվող գլոբալ երևույթների վրա: Այդ իմաստով հեռուստատեսությունը կարող է մեծ ներդրում կատարել շատ խնդիրներ լուծելու և մեր հոգևոր հորիզոնն ընդլայնելու հարցում հասնել ցանկալի արդյունքի:

2. *Հեռուստացույցի բացասաբար ազդեցությունը կամ հեռուստացույցը՝ «թշնամի»*

Գիտնականները վստահեցնում են, որ հեռուստացույցի առջեւ երկար նստելը վնասակար է սովորողների համար: Շատ սովորողներ իրենց օրն անցկացնում են էկրանի առջեւ ժամերով նստած: Դրա մասին ծնողները քաջատեղյակ են, սակայն ոչ մի կերպ չեն կարողանում իրենց երեխային «կտրել» հեռուստացույցից: Այսօր հոգեբանները եւ գիտնականները միաձայն պնդում են, որ հեռուստացույցը առաջին հերթին ազդում է սովորողի զարգացող նյարդային համակարգի վրա, որն էլ անդրադառնում է առողջության եւ վարքի վրա: Հեռուստացույցը ստեղծում է հիպնոտիկ մի դաշտ, որն էլ ստիպում է սովորողներին ժամերով գամվել էկրանին: Երբ հեռուստացույցն անջատվում է, ուղեղի բետա ալիքները (արթնության ալիքները) իրենց տեղը զիջում են դանդաղ ալֆա ալիքներին (որոնք դիտվում են այն ժամանակ, երբ մարդը պատրաստվում է քնել): Դրա հետեւանքով ուշադրությունը դառնում է ցրված, տեսողությունը եւ լսողությունը բթանում են, իջնում է ճանաչողական գործընթացների արագությունը: Հեռուստացույց շատ դիտելուց ակտիվանում է մարդու աջ կիսագունդը, որը պատասխանատու է զգացմունքային ռեակցիաների համար: Հեռուստացույցը վատ է անդրադառնում սովորողների հոգեկան ներաշխարհի եւ վարքագծի վրա: Գիտնականները եկել են այն եզրակացության, որ ոչ միայն հեռուստացույց նայելն է վնասակար, այլեւ հեռուստացույցի՝ պարզապես միացրած վիճակում լինելը: Սովորողը դրանից նյարդային է դառնում, կռվարար եւ ջղային, զայրացկոտ: Ամեն առիթով սովորողը ոչ միայն լաց է լինում, այլեւ դադարում է լսել ծնողներին:

Հեռուստացույցը բացասաբար է ազդում երեւակայության վրա

Զգայարանների ֆիզիոլոգիայի մասնագետ Հորստ Պրենը գրում է. «Հեռուստաէկրանի առջև 10-15 ժամ նստած երեխայի ուղեղը նման է անապատի: Այդ երեխաները տառապում են երևակայության լրիվ կորստով: Որոշ երեխաներ ընդունակ չեն նույնիսկ հիշողությամբ բաժակ նկարելու: Ժամանակի հետ այդ կորուստը անդառնալի է լինում: Պետք է հիշել, որ ժամանակ առ ժամանակ երեխաների համար բարձրաձայն կարդալը նրանց մեջ առաջացնում է ոչ միայն կարդալու ցանկություն, այլև զարգացնում է մտածողությունն ու երևակայությունը: Հեռուստացույցից հրաժարված երեխան ոչինչ չի կորցնում, այլ փրկում է վերը նշված հատկանիշների ձևավորման համար անհրաժեշտ ժամանակը: Եթե արդեն դա ձեռք է բերել, ուրեմն չի խանգարի, որ նա ժամանակ առ ժամանակ հեռուստացույց ևս նայի: Եթե մանկությունը հագեցած է եղել խաղերով ու շարժումներով, երաժշտությամբ ու երևակայությամբ, ներքին պատկերներով ու տպավորություններով, ծնողները կարող են հանգիստ լինել, որ նրանց տղան կամ աղջիկը կգտնի կյանքի իր սեփական ուղին»:

Երկար հեռուստացույց դիտելուց սովորողի երեւակայությունը սահմանափակվում է: Գերմանացի մանկաբույժ Պիտր Վինտերշտայնը ավելի քան 17 տարի ուսումնասիրել է 10-12 տարեկան սովորողներին եւ պարզել, որ որքան շատ են ժամանակ անցկացնում

հեռուստացույցի առջեւ, այնքան քիչ դետալներ է օգտագործում նկարելիս, իսկ նկարված կերպարներն արտահայտված չեն: Նրանց նկարած կերպարներն անհամաչափ են, նկարները՝ ավելի սխեմատիկ ու անկենդան:

Խանգարում է կենտրոնանալ, վատ ուսում, շփում

Փոքր տարիքում երեխայի մեջ անընդհատ պահանջ է առաջանում կապ գտնելու առարկաների, պատկերների և երևույթների միջև, որը դրսևորվում է անընդհատ հարցեր տալով: Ավելի ուշ շրջանում դպրոցական տարիքում սովորողի դատողությունը ավելի է խորանում, ձևավորելով վերլուծական դատողական, խոհական մտածողություն, որն էլ ձևավորում է բանականությունը: Դրա շնորհիվ մարդը կարողանում է բացահայտել իրական կյանքի ընդհանուր օրինաչափություններ: Եթե այդ պահանջը չի լրացվում համապատասխան դաստիարակությամբ, ապա հասուն տարիքում ստեղծագործական ունակությունները զարգացած չեն լինում: Դրա երկրորդ փուլը սկսվում է սեռահասունության շրջանում: Այդ փուլում ինտելեկտուալ ներուժը նույնպես կարող է կորչել, եթե դաստիարակությամբ ժամանակին չամրապնդվեն նոր ունակություններ: Արդյունքում, բնության ընձեռած որոշ մտային ունակություններն անվերադարձ կորչում են: 1994 թվականին գերմանական «Շպիգել» ամսագիրը թեստավորել է գերմանացիների ընդհանուր կրթական մակարդակը և ստացել է հետևյալ պատասխանը. «Որքան մարդը երկար է հեռուստացույց դիտում, այնքան խղճուկ են նրա գիտելիքները: Դա վերաբերում է բոլոր բնագավառներին, բացի սպորտից»: Ինչո՞ւ: Այդ հարցին կարելի էր հեշտությամբ պատասխան գտնել ժամանակակից բնագիտական հետազոտություններով: Ամերիկացի գիտնականները փորձել են բացահայտել հեռուստահաղորդումների ժամանակ մարդու օրգանիզմում կատարվող կենսաքիմիական, ներզատական, նյարդամկանային և զգայական գործընթացների բնույթը, ինչպես նաև կենտրոնական նյարդային համակարգում ընթացող փոփոխությունները: Մարդկային աչքը չնայած դրսևորում է լուսանկարչական ապարատի հատկանիշներ, սակայն տեսողության գործընթացին մասնակցում է աչքի ոչ միայն օպտիկական տարրը: Տեսողությունը ոչ թե պասիվ գործողություն է, որն ուղղակի ընկալում է արտաքին միջավայրի լուսային գրգիռները, այլ բարձրագույն աստիճանի ակտիվ գործընթաց է: Չնայած ինչ-որ բան դիտելիս մենք չենք գիտակցում մեր աչքերի արագ շարժումները, այդուհանդերձ, դրանք կապված են մեր ամբողջ մարմնի հետ: Հեռուստացույցի առջև աչքերի ակտիվությունը համարյա լրիվ ընկնում է: Հեռուստացույցի առջև նստածը ակնդետ նայում է էկրանին, քանի որ աչքը շարժող մկանները անշարժ են: Նրանց քարացածությունը տարածվում է ամբողջ մարմնում, և նույնիսկ ամենաշարժուն սովորողը հեռուստացույցի առաջ նստում է անշարժ: Սակայն այստեղ խնդիրը ոչ թե մկանային պասիվությունն է, այլ մկաններին ուղղորդող կամային պասիվությունը: Այդ գործընթացը ոչ այլ ինչ է, եթե ոչ հարձակում մարդու կամային ունակության վրա, որով պայմանավորված են նրա ինքնուրույնությունը, սեփական ակտիվությունը: Տեղի է ունենում ակտիվության

նվազում, կամքի կանգ, այսինքն՝ անհատի դեգրադացիա: Հեռուստացույցի անշարժացնող ազդեցությունը արտահայտվում է նաև գլխուղեղի կեղևի ակտիվության վրա: ՈՒսումնասիրությունները բացահայտել են, որ հեռուստացույցի առջև նստած և հիպնոսի վիճակում գտնվող մարդու էլեկտրաուղեղագրերը իրար շատ նման են:Հեռուստացույցը ազդում է նաեւ սովորողի ուսման պրոցեսի վրա: Որքան վաղ հասակից է սովորողը տարվում հեռուստացույցով, այնքան տուժում է առաջադիմությունը, քանի որ ծանրաբեռնվում են ուշադրությունը, լսողական եւ տեսողական համակարգերը: ովորողը պետք է միշտ ակտիվ շարժվի, ձեռք բերի նոր հմտություններ, նկարի, բռնի, կառուցի, իսկ հեռուստացույց նայելու ժամանակ երեխան պասիվ է, չի զարգանում: Մի շարք հետազոտություններ փաստում են, որ սովորողները, ովքեր գրեթե չեն նայում հեռուստացույց ,դատում, մտածում են ավելի ռացիոնալ և նրանց աշխարհընկալումն ավելի իրական է, քան հաճախ հեռուստացույց նայող երեխաներինը:Կանադայում մանկապարտեզ հաճախող երեխաների շրջանում անցկացված հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ միջինը օրական 72 րոպե կամ նույնիսկ մեկ ժամ հեռուստացույցի դիմաց անցկացնելը կարող է վատ անդրադառնալ երեխաների վրա: Այս մասին հրապարակել է «Science Daily» պարբերականը: Մոնրեալի համալսարանի պրոֆեսոր Լինդա Պագանին «Սուրբ Ժուստին» մանկական հիվանդանոցի հետ համատեղ անց է կացրել մի հետազոտություն, որի արդյունքում պարզ է դարձել, որ հեռուստացույցի առաջ ավել ժամանակ անցկացնելուց հետո սովորողների մոտ առաջացել են բառապաշարի, մաթեմատիկական կարողությունների հետ կապված խնդիրներ: Նրանք ավելի քիչ են մասնակցել ակտիվ դասապրոցեսին, ուշադրության ու կենտրոնանալու խանգարում են ունեցել և ֆիզիկական պասիվություն են դրսևորել: Հետազոտությանը մասնակցել են դպրոց հաճախող 991 աղջիկ և 1006 տղա երեխաներ: Պարզվում է, որ հեռուստացույցի առաջ ավելորդ ժամանակահատված անցկացնելը ամեն առումով բացասաբար է ազդում սովորողների վրա:

Հեռուստացույցից կախվածությանը զուգահեռ մարդկանց մեջ վերանում է գիրք կարդալու ցանկությունը: Հետազոտությունները անհերքելիորեն ապացուցում են, որ կարդալու ունակությունը, կարդալու ցանկությունը և կարդալու սովորությունը համալիր ունակություններ են, որոնք ապահովում են սովորողների հոգեկան, սոցիալական ու ինտելեկտուալ զարգացումը: Մեծերի հեքիաթները լսած և վաղ տարիքում ընթերցանությամբ զբաղվող սովորողները ոչ միայն լավ են տիրապետում լեզվին, այլև ընդունակ են իրականությունը ճիշտ պատկերացնելու: Այլ կերպ ասած, ակտիվ ընթերցողը դառնում է նաև ակտիվ մտածող:
ԱՄՆ-ում 12-15 տարեկանների շրջանում կատարված հետազոտությունները պարզել են, որ դպրոցական առաջադիմության, ինտելեկտի մակարդակի և հեռուստադիտումների միջև գոյություն ունի հակադարձ կապ: Պարզվել է, որ դեռահասների լեզվական արտահայտչաձևերը, մաթեմատիկական ունակությունները, ընթերցանության հմտությունները նվազում են հեռուստադիտումների հաճախության մեծացմանը զուգահեռ:Բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ ովքեր գիտակցաբար սահմանափակում են հեռուստադիտումները, ունեն ավելի բարձր կրթական մակարդակ: Սակայն այդ գիտելիքները նրանք ոչ թե հեռուստաէկրանից են ստացել, այլ ձեռք են բերել դպրոցում, գրքերից ու թերթերից, երաժշտությամբ զբաղվելով, ճանապարհորդելով, սպորտային մարզումներով և այլն:

Խանգարվում է քունը ,նպաստում է ճարպակալմանը, մեծանում է սովորողների շրջանում շաքարախտի առաջացման հավանականությունը

Այն սովորողները, ովքեր չարաշահում են հեռուստացույց (համակարգիչ) դիտելը, ավելի դժվար են քնում, գիշերները հաճախ են արթնանում, մղջավանջներ տեսնում: Այս բոլոր բարդությունները շարունակվում են նաեւ ավելի մեծ տարիքում: Երկար ժամանակ հեռուստացույցի առջեւ անշարժ գամված մնալով՝ սովորողը աստիճանաբար սովորում է նստակյաց կյանքի, ինչն էլ նպաստում է գիրանալուն: Առաջին խանգարումը, որ դիտվում է հեռուստացույցի չարաշահման դեպքում, քնի

խանգարումն է, իսկ ոչ բավարար քունը նպաստում է մարսողության ոչ լիարժեք իրականացմանը: ԱՄՆ-ում կատարված մեկ այլ հետազոտության արդյունքում պարզվել է, որ սովորողների համաճարակ հիշեցնող գիրացումը ուղղակիորեն կապված է հեռուստացույցի առջև նրանց անցկացրած ժամերի հետ: Այսինքն՝ հեռուստացույցը ազդում է նաև դիտողների օրգանիզմի նյութափոխանակության վրա: Հետազոտվող բոլոր սովորողների մոտ հիմնական փոխանակությունը, նախնական՝ հանգիստ վիճակում գտնվելու տվյալի համեմատ, նվազում է 14 %-ով: Կարելի է հասկանալ, որ համապատասխանորեն դանդաղում են նյութափոխանակության գործընթացները նաև ուղեղում: ՈՒրեմն հեռուստաէկրանը քնի և արթմնի սահմանային վիճակների է բերում ոչ միայն գիտակցությունը, այլև օրգանիզմի ամբողջ նյութափոխանակությունը: Հեռուստադիտման ժամանակ պուլսը դանդաղում է 10 %-ով, այսինքն՝ բոպեում յոթ հարվածով,կամ ժամում 420հարվածով:
Հեռուստացույցի կամ համակարգչի էկրանի առջեւ օրական ավելի քան 6 ժամ անցկացնող սովորողները ավելի հաճախ են բախվում 2-րդ տիպի դիաբետի հետ:

Նպաստում է ագրեսիայի, բռնության առաջացմանը



Սովորողների հոգեկան կառուցվածքի վրա ազդում է ռեժիսորների կասկածիլի նորամուծությունները՝դաժանությունը, արյունը, որը անընդհատ հոսում է հեռուստաէկրաններից, սպանությունները: Այս ամենը ձևավորում է անբնական վերաբերմունք մահի հանդեպ: Նույնը կարելի է ասել սեռերի միջև հարաբերություններին, որոնք նույնպես կրկնօրինակվում են հեռուստահերոսներից: Էկրանից ցուցադրվող ագրեսիան և բռնությունն ուղեղն ընկալում է որպես իրական տեսարան, մենք տագնապ և անվստահություն ենք ապրում, իսկ ուղեղի համապատասխան կենտրոնները գրգռվելով՝ նպաստում են փախուստի և ագրեսիայի

ակտիվացմանը: Երբ մարդը պարբերաբար նայում է դաժան սցենարներով ֆիլմեր, տեսարաններ, հուզական արձագանքները նման երևույթների նկատմամբ թուլանում են: Այսպես, սովորողը աստիճանաբար սովորում է բռնությանը և սկսում է սառնասրտորեն այդ ամենը վերարտադրել: Հաճախ նրանք դիմում են նմանատիպ քայլերի այն ժամանակ, երբ կարծում են, որ իրենց արարքն անպատիժ կմնա:

Հեռուստատեսությունն ազդում է մտածելակերպի և վարքի վրա:

Մասնագետները վիճում են այն *ապացույցի* վերաբերյալ, թե արդյոք կարելի է ապացուցել, որ ագրեսիա դիտելը հանգեցնում է ագրեսիայի: Սակայն շատերը համաձայն են, որ հեռուստատեսությունն ազդում է մեր մտածելակերպի և վարքի վրա: Մտածեք հետևյալ բանի շուրջ. մեկ լուսանկարը կարող է մղել մեզ բարկանալ, արտասվել և ուրախանալ: Երաժշտությունը խոր ազդեցություն է թողնում մեր զգացմունքների վրա: Տպագրված բառերը նույնպես մեր մեջ զգացմունքներ են առաջացնում, մղում են մեզ մտածելու և ինչ–որ գործեր անելու: Իսկ որքա՛ն խոր ազդեցություն կարող են թողնել այն շարժվող նկարները, երաժշտությունն ու բառերը, որոնք վարպետորեն իրար են կապակցված: Զարմանալի չէ, որ հեռուստացույցը գրավում է մարդկանց, ընդ որում այն շատ մատչելի է: Եթե 30 վայրկյան տևող գովազդը ազդում է մեր տեսակետների և վարքագծի վրա, կարող ենք վստահ լինել, որ ժամեր շարունակ հեռուստացույց դիտելը նույնպես կազդի:

3. *Խորհուրդ ծնողներին*

- ✓ Ցանկալի է, որ երեխայի սենյակում հեռուստացույց չլինի: Եթե սովորողը չափից շատ ժամանակ է անց կացնում հեռուստացույցի մոտ, դա պետք է անհանգստացնի ծնողներին՝ նշանակում է, որ նա զբաղմունք չունի: Հարկավոր է զբաղմունք գտնել՝ ցբաղվել սպորտով, երաժշտությամբ, այցելել լողավազան:
- ✓ Մի միացրեք հեռուստացույցը դպրոց գնալուց առաջ, դա կարող է շեղել սովորողի ուշադրությունը ուսումնական պրոցեսից:
- ✓ Հետեւեք, թե երեխան ինչպիսի հաղորդումներ է նայում եւ որքան ժամանակ է անցկացնում էկրանի առաջ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն սովորողները, ովքեր նայում են կրթական հաղորդումներ, ավելի հեշտությամբ են հարմարվում սոցիալական միջավայրում, առաջադեմ են դպրոցում, ունեն ավելի հարուստ բառապաշար: Ծնողներն այդ հարցերում պետք է բավական պատասխանատու լինեն, քանի որ այդ տարիքում ծնողները հեղինակություն են սովորողի համար եւ նրանց կողմից արվող առաջարկություններն ընդունվում են սովորողի կողմից:
- ✓ Երեխային հեռուստացույցից օգտվելու կուլտուրային սովորեցրեք ձեր փորձով: Այն ծնողները, ովքեր հեռուստամոլ են, դժվար թե կարողանան իրենց երեխաներին օգնել այս հարցում: Սակայն, նրանք պետք է այս կանոնները պահպանեն գոնե մանուկ հասակում՝ հասկանալով, որ դա բացասաբար է ազդում երեխայի ուղեղի զարգացման վրա:

Մաս 2

Համակարգիչը , համացանցը և սովորողը

Լինելով 20-րդ դարի վերջի ամենաբարդ տեխնոլոգիաներից մեկը՝ այն միաժամանակ ամենատարածվածներից է, իսկ իր ապագա ազդեցությունների հնարավորությամբ՝ ապահովաբար առաջինը: Երբ մարդկային գործունեության գրեթե բոլոր ձեւերը այս կամ այն չափով միջնորդված են համակարգչային սարքավորումներով, այն դադարում է սոսկ հզոր տեխնիկական միջոց լինելուց եւ դառնում ընկերային կյանքի վրա մեծապես ազդող գործոն, արմատական հասարակական փոփոխությունների զորեղ խթան: Համակարգչի հիման վրա ուսման միջավայր ստեղծելու գաղափարը, որ հետագայում ծավալուն մշակումների առիթ տվեց, ձեւավորվեց նաեւ շնորհիվ երեխայի իմացական զարգացման հոգեբանական տեսությունների: Համակարգիչն այսօր տեղեկության ստացման և մշակման հզոր գործիք է: Այդ պատճառով լիովին բնական է այդ միջոցների ներդրումը ժամանակակից ուսումնական գործընթացում: Սակայն կան ու կլինեն խնդիրեր՝ տեխնոլոգիաների թանկությունը, համակարգիչների, ծրագրերի ձեռքբերումը, դրանց թարմացումն ու ժամանակից պահանջներին հարմարեցումը, համակարգիչների և ցանցերի սպասարկումը, ինտերնետը: Առայժմ չկա ուսումնադաստիարակչական գործընթացի մեջ ՏՏ-ի սահուն նորհոսքն ապահովող մեթոդաբանական համակարգ: Բացի դրանից՝ անհրաժեշտ են բարձր որակավորում ունեցող դասախոսներ, նրանց անընդհատ վերապատրաստում և մասնագիտացում:

Համակարգիչ եւ կրթություն

Տեղեկատվությունը եւ ՏՏ կարեւոր նշանակություն ունեն կրթության կազմակերպման մեջ: «Սովորելուց» առավել, դպրոցը հաղորդակցության տեղ է, որտեղ շատերը ձեռք են բերում մեծ խմբերում հաղորդակցվելու հմտություններ: Սրանից պարզ է դառնում, թե ինչ մեծ դեր ունեն համակարգչով միջնորդված հաղորդակցության ժամանակակից միջոցները դպրոցի համար: Մինչդեռ՝ հասարակության կողմից այդ միջոցների նախնական հասկացումն ապահովելու խնդիրը արդեն իսկ դրվել է դպրոցի վրա: Համակարգչային խաղերը կազմում են նման պարզագույն ունակություններ պահանջող առաջին համակարգչային ոլորտը, որտեղ երեխաները մեծ հափշտակությամբ խաղում եւ միաժամանակ սովորում են: Սա համոզիչ կերպով ցույց է տալիս համակարգչային հիմքով միջավայրի մեծ կարողությունները ուսման կազմակերպման համար, բայց եւ հուշում դրա մեջ խաղի կենտրոնական նշանակությունը:

Համակարգիչների ստեղծումից ի վեր կրթության մեջ դրանց ներդրման նպատակը հետապնդող աշխատանքները ընթացել են երկու ուղղությամբ՝ համակարգչի հարմարեցումը ուսումնական նպատակներին եւ ուսումնական համակարգի հարմարեցումը համակարգչային միջավայրին:

Համակարգիչների մշակման սկզբնական փուլը կապված է եղել Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ռազմական նպատակներով կատարվող ուսումնասիրությունների հետ եւ հետագայում նրա հարմարեցումը այլ խնդիրների եւ հատկապես՝ կրթական-ուսումնական՝ նկատելի ջանքեր ու ժամանակ պահանջեց: Սրան պետք է ավելացնել այն փաստը, որ ի տարբերություն մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտների, որ տեխնոլոգիական միջամտության շնորհիվ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում անճանաչելի են դարձել՝ բժշկություն, տեղափոխության միջոցներ եւ այլն, դպրոցը եւ ամբողջ կրթական համակարգը աննշան փոփոխությունների է ենթարկվել: Սա նույնպես խոսում է դպրոցի եւ համակարգչի «հաշտեցման» հետ կապված դժվարությունների մասին:

Անձնական համակարգիչների առաջացումը եւ արագ տարածումը այս հարցում դիրքորոշման կտրուկ փոփոխության ազդակ հանդիսացավ: Սրանց հասարակական-տնտեսական նշանակության հարցը բուռն բանավեճերի առարկա դարձավ: Հետեւությունը միանշանակ էր՝ «համակարգչային գրագիտության» որոշ մակարդակ կենսականորեն անհրաժեշտ կլինի քաղաքացիների մեծ մասի համար: Այս հետեւությունը բազմաթիվ արեւմտյան երկրներում կառավարական մակարդակի

քննարկումների տեղիք տվեց, որոնց արդյունքը եղավ կրթական համակարգի վերափոխման ծրագրերի ու միջոցառումների մշակումը:

Փոքր համակարգիչների տարածումը փոխեց նաեւ համակարգիչների մասին եղած պատկերացումները՝ առաջ բերելով «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» արտահայտությունը: Եթե սկզբնապես շեշտը դրվում էր տեխնոլոգիայի՝ hardware եւ software, վրա՝ հիմնական ուշադրությունը դարձնելով մեքենայի կամ ծրագրերի կարողությունների ուսումնասիրմանն ու բարելավմանը, ապա այժմ ուշադրության կենտրոնում հայտնվեց տեղեկատվությունը: Սրա շնորհիվ համակարգիչների փոխազդեցությունը ուսումնական ընթացքի հետ դարձավ ավելի արդյունավետ:

Համակարգչի հիման վրա ուսման միջավայր ստեղծելու գաղափարը, որ հետագայում ծավալուն մշակումների առիթ տվեց, ձեւավորվեց նաեւ շնորհիվ երեխայի իմացական զարգացման հոգեբանական տեսությունների: Սրանցից առավել հայտնիների թվում է շվեյցարացի հոգեբան Ժ. Պիաժեի մշակած տեսությունը: Համաձայն այս տեսության՝ երեխայի զարգացումը կատարվում է չորս փուլով, որոնցից յուրաքանչյուրում նա բնորոշվում է միանգամայն տարբեր իմացական հետաքրքրություններով ու միջավայրում գործելու եղանակներով: Երեխան պարզապես փոքրիկ մարդ չէ: Մեծանալիս նա կտրուկ կերպարանափոխությունների է ենթարկվում: Փուլերից յուրաքանչյուրը երեխայի ուսման տարբեր կազմակերպում եւ տարբեր միջավայր է պահանջում: Ահա այս միջավայրերը ստեղծելու առումով է, որ համակարգիչը մեծ հնարավորություններ է խոստանում: Մարդու միտքը միշտ ձգտում է ստեղծել ցանկացած գործունեության համար հարմար միջավայր, իսկ համակարգիչը առաջարկում է նախապես եւ մեծապես մշակված միջավայրեր :

1 ***Համակարգչի(համացանցը) դրական ազդեցությունները***

- *Տեղեկատվություն որոնեք*:Առանց տնից դուրս գալու, կարող եք մի քանի վայրկյանում առցանց գնալ և պատասխանել ցանկացած հարցի: Այն շատ արագ և հարմար է:
- *Հաղորդակցություն*:Ոչ ոք այլևս չի գրում թղթային նամակներ:
- Աշխատանք. Այժմ դուք կարող եք աշխատել առանց ձեր տանից դուրս գալու: Դուք կարող եք ինքներդ ընտրել ինտերնետի մասնագիտություն և համագործակցել ամբողջ աշխարհի հետ:
- *Զվարճանք*: Համակարգչային խաղեր, կինոնկարներ դիտելը, երաժշտություն լսելը: Այս ամենը կարելի է գտնել ինտերնետում:
- *Դասընթացներ:* Հեռավար ուսուցումը հսկայական հնարավորություններ է տալիս մարդու համար նոր գիտելիքներ ձեռք բերելու համար:

Ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիական միջոցները դասավանդողի ու սովորողի հարաբերությունները դարձնում են օպերատիվ, արդյունավետ ու մատչելի: Այնուհանդերձ նշենք, որ անհատական ուսուցման իրականացման գործընթացում չեն ձևավորվում ուսումնական պարապմունքների խմբային ձևերի կազմակերպման ժամանակ ձևավորվող հատկանիշներ՝ հաղորդակցական կարողություններ, թիմում աշխատելու կարողություններ, փոխօգնություն, աջակցություն, հանդուրժողականություն, համակեցություն և խմբի համար պատասխանատվություն կրելու կարողություն: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ էլեկտրոնային ուսուցման համակարգերը, որոնք կառուցված են մուլտիմեդիական տեխնոլոգիաների հիման վրա, ներկայումս ուսուցման առավել արդյունավետ միջոցներից են: Հատկապես այս պարագայում է լիարժեքորեն իրականանում դասավանդման մեթոդիկայի հին, բայց ժամանակով ստուգված սկզբունքը՝ լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել: Համակարգչային գրաֆիկայի, անիմացիայի, կենդանի տեսապատկերման, ձայնի համակցված օգտագործումը եզակի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրվող նյութն առավելագույնս ընկալելու դիտողական տեսքով, ավելի հասկանալի ու հիշելի: Դա հատկապես կարևոր է այն դեպքում, երբ սովորողը պետք է յուրացնի մեծ ծավալի տեղեկատվություն: ՏՀՏ զարգացումները նպաստում են տեղեկատվական հեռահաղորդակցմանը, ինչն էլ իր հերթին նպաստում է հեռավար ուսուցման կիրառման հնարավորությունների արդյունավետ իրականացմանը: Ինտերնետային գլոբալ համացանցը ապահովում է հսկայական ծավալով տեղեկատվության մատչելիություն Երկիր մոլորակի ամբողջ տարածքում: Համակարգչային հաղորդակցման միջոցներից առավել տարածված են էլեկտրոնային փոստը, համացանցը և էլեկտրոնային կրիչները:

Այս միջոցները դասավանդողներին և սովորողներին հնարավորություն են ընձեռում համատեղ օգտագործելու տեղեկատվությունը, մասնակցելու խնդիրների լուծմանն ու քննարկմանը: Էլեկտրոնային փոստը լայնորեն կիրառվում է նաև հեռավար ուսուցման ժամանակ հետադարձ կապերի հաստատման ու համակարգման համար: Այն շահավետ է օգտագործել նաև դասավանդողի և սովորողների արդյունավետ համագործակցության համար, որի միջոցով էլ կարելի է գրավոր շարադրել սեփական կարծիքը, հարցեր տալ, առաջարկություններ անել, ծանոթանալ բոլոր մասնակիցների պատասխաններին, առաջարկություններին և կատարել գնահատում: Ինտերնետային գլոբալ համացանցը հնարավորություն է ստեղծում հեռավար կազմակերպելու էլեկտրոնային թեմատիկ կոնֆերանսներ: Դրանք կարող են իրականացվել նաև տվյալ ուսումնական հաստատության տեղային (լոկալ) ցանցում, որին կարող են մասնակցել բոլոր սովորողները՝ քննարկելով ուսումնասիրվող թեմաները: Աշխատանքի ոչ համաժամանակյա ռեժիմը նպաստում է ռեֆլեքսիայի (անդրադարձ կատարելու ունակության) և համապատասխանաբար հարցերի ու պատասխանների արտահայտմանը, իսկ գրաֆիկայի, ձայնի, անիմացիայի կիրառման հնարավորությունները այդպիսի վիրտուալ միջոցառումները (գիտատեսական կոնֆերանս, սեմինար, քննարկումներ և այլն) դարձնում են միանգամայն արդյունավետ:

2 *Ինչպե՞ս կարող է տեխնոլոգիան բարձրացնել ուսման որակը:*

Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը որակապես փոխում է դասավանդողի դերը, և նա դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող ու գնահատող գործընկերԴասապրոցեսի ժամանակ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաները կիրառում են ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնելու համար: Ուստի ելնելով ժամանակակից դպրոցի պահանջներից՝ անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանումը: Օգտագործելով համակարգչի երկխոսական, մոդելավորման, գունային և բացառիկ այլ հնարավորությունները՝ դասը կարելի է դարձնել ավելի մատչելի, ընկալելի, դիտողական և նույնիսկ «հրավիրող»: Համակարգիչը կարող է օգնել դասավանդողին ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար: Էկրանին ցուցադրվող գործողությունների հաջորդականությունը կարող է ավելի դյուրընկալ դարձնել մատուցվող նյութը, գրքային նյութը կարող է վերածվել մի պրակտիկ իրադրության: Ինչպե՞ս են համակցվում ՏՀ տեխնոլոգիաները և ուսուցման-ուսումնառության նոր մոտեցումները: Կրթության համակարգ ինտեգրվող տեղեկատվական և հեռահաղորդակցական նոր

տեխնոլոգիաները պետք է համապատասխանեցվեն մանկավարժության, հոգեբանության և այլ գիտությունների գլխավոր՝ մարդաբանական, անձնակենտրոն ուղղվածությանը: Այսինքն՝ ուշադրության կենտրոնում պետք է լինեն սովորողի անձը և նրա ուսումնառությունը: Այսպիսով՝ կրթական գործունեության մեջ փոխվում է շեշտադրումը՝ ուսուցչակենտրոնից դեպի անձնակենտրոն և դասավանդումից դեպի սովորողի ինքնուրույն ճանաչողական գործունեություն: Մանկավարժական և մեթոդական գրականության մեջ կրթության գործընթացում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման մի քանի ուղղություն է նշվում, որոնցից պրակտիկայում առավել կիրառելի է. • համակարգիչը՝ որպես գիտելիքների ստուգման միջոց, • լաբորատոր գործնական աշխատանք՝ համակարգչային մոդելավորման կիրառմամբ, • տեխնոլոգիաները՝ որպես ցուցադրման միջոց նոր նյութը բացատրելու ընթացքում, • անհատական համակարգիչը՝ որպես ինքնակրթության միջոց:
Այսօր արդեն կարելի է ասել, որ ուսումնական հաստատություններում համակարգիչների ներդրումը հզոր գործոն է՝

- մտավոր զարգացման,
- բարոյակամային որակների ձեռքբերման,
- սովորողի գեղագիտական զարգացման:

Եթե ուսուցումը դիտարկենք որպես սովորողների հատուկ կարողությունների և հմտությունների ձևավորմանն ուղղված հստակ մշակված գործընթաց, ապա ուսուցման արդյունավետությունը պետք է չափենք ոչ միայն և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ինչ գիտի և ինչ կարող է անել աշակերտը: Այլ կերպ՝ որքանով է աշակերտն իր գիտելիքները կարողանում կիրառել և ինչ հմուտությամբ է դա անում:

«Պարզապես գիտելիք ստանալը բավարար չէ, հարկավոր է գտնել դրանց կիրառությունը»: Վոլֆգանգ Գյոթե.

Գիտելիքից բացի սովորողին անհրաժեշտ է տալ նաև դրանք կիրառելու իրական կարողություններ, հմտություններ, մարտավարություն՝ ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ, ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները:

Այսպիսով՝ համակարգչային տեխնոլոգիաները ուսուցման մեջ մշակույթի իրական մասնիկ են և ժամանակակից դպրոցներում դրանց ներդրումը դառնում է պարտադիր ու անխուսափելի: Պետք է ուսումնական գործընթացում պարտադիր պայման դարձնել գիտելիքների հաղորդումը, ամրապնդումն ու ստուգումը համակարգիչների օգնությամբ

(համակարգչային ուսուցողական խաղերի), և այնպես, որ սովորողներն այդ անեն հաճույքով:

3 *Համակարգչի (համացանցը) բացասական ազդեցությունները*

Համացանցի լուրջ բացասական կողմերից մեկն այն է, որ այստեղ չի վերահսկվում ինֆորմացիան, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելքներ: Համացանցը լի է անորակ, չճշգրտված ինֆորմացիաներով, էրոտիկ բնույթի նկարներով ու տեսանյութերով, որոնք կարող են կլանել անգամ հասուն ու գիտակից մեծահասակներին: Չի բացառվում, որ սովորողները ևս նմանօրինակ ինֆորմացիաի հանդիպեն: Առավել ևս դեռահասության տարիքը սեռային ինքնագիտակցության, սեռական նույնականության ձևավորման, սեռային դերերի ու բնութագրերի յուրացման կարևոր շրջաններն են: Սեռերին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկատվության և տեսանյութերի, անառողջ փոխհարաբերությունների անարգելք ներկայացումը կարող է խեղաթյուրել դեռահասների ու պատանիների սեռական ոլորտի մասին պատկերացումները, բացասաբար ազդել սեռական հասունացման ընթացքի վրա, բացասական հետևանքներ ունենալ տարիքին բնութագրական տվյալ ոլորտի նկատմամբ դրսևորվող գերուշադրության ու հետաքրքրության վրա, ընդհանրապես չձևավորված սեռական, սոցիալական, հոգեկան ոլորտների զարգացման ընթացքների վրա: Սովորողների մոտ կախվածություններ են առաջանում սոցիալական ցանցերից, որոնք դարձել են հաղորդակցման այլընտրանքային ձևեր, ծանոթության և շփման հասանելի միջոցներ: Եվս մեկ խնդիր է համացանցային, այսպես կոչված, ժարգոնը կամ լեքսիկոնը՝ բառապաշարը: Շատ նյութերի, հոդվածների տակ ընդունված է մեկնաբանություններ կամ, այսպես ասած, քոմենթներ գրել: Այդտեղ ազատություն է եւ իսկական խառնաշփոթություն. ինչ ասես կարելի է կարդալ, ցենզուրայից դուրս արտահայտություններ, որոնք ընդունված չեն սովորական խոսակցությունների ժամանակ: Բայց չէ՞ որ մեր երեխաները բախվում են դրանց հետ, կարդում… Նրանք կարող են տարվելել նաեւ, այսպես կոչված, «մեծահասակների համար» նախատեսված հայտարարություններով՝ անպարկեշտ նկարներով եւ հրավերներով, գովազդներով եւ խաղերով: Այդ խաղերն ինքնին մի ողջ հիմնախնդիր են երեխաների եւ նույնիսկ մեծահասակների համար:

Այսօր որոշ երկրներում կան որոնման յուրատեսակ համակարգեր՝ նախատեսված սովորողների համար: Գերմանիայում, օրինակ, ստեղծվել է fraqFINN որոնման համակարգը՝ նախատեսված սովորողների համար: Այդ որոնող համակարգը ստուգում է եւ արգելում անպատշաճ բառերը, որոնք բերվում են որոնման ժամանակ: Այդ համակարգում աշխատում են մասնագետներ եւ գիտնականներ, մանկավարժներ, և բացառվում է որեւէ անպատշաճ կայքի դուրս սպրդում:

Համացանցի վտանգները երեխայի (սովորողի) հոգեկան առողջության համար

Մարդկությունը բավական շուտ գիտակցեց համակարգչի վնասակար ազդեցությունը մարդու ֆիզիկական առողջության վրա, սակայն դեռևս քիչ են խոսում մարդու

հոգեկան աշխարհի վրա համակարգչի ազդեցության մասին: Մինչդեռ, վերջերս հեգեբույժներն ու հոգեբաններն ահազանգում են մի նոր, քիչ ուսումնասիրված «հիվանդության»՝ համակարգչային կախվածության մասին: Միաժամանակ, համակարգչի և համացանցի ազդեցությունը սովորողի հոգեկան զարգացման վրա բացասական հետևանքներ կարող է ունենալ: Նախ համակարգչի առջև շատ ժամանակ անցկացնելու արդյունքում սովորողների մոտ ընդհանուր թուլություն և հոգնածություն է դրսևորվում, քնի խանգարումներ: Բացասական հետևանքները կարող են իրենց հետքը թողնել հոգեկան գործընթացների վրա (մասնավորապես սովորողի հիշողությունն է վատացում, դպրոցում դասերի ժամանակ դժվարությամբ են կենտրոնացնում ուշադրությունը, հասկանում ու դատողություններ անում), հոգեվիճակների, անձնային հատկությունների ձևավորման վրա, միջանձնային հարաբերությունների ոլորտում: Առավել շատ են հանդիպում հուզական խաթարումները, դրդապատճառային ոլորտի ձևավորման բացասական միտումները՝ կապված ինֆորմացիոն ներգործության հետ: Տուժում են ծնողների հետ հարաբերությունները, հատկապես երբ նրանց փորձում են հեռացնել, կտրել համակարգչից:

Համակարգիչը (հեռուստացույցը)բացասական է ազդում ֆիզիկական առողջության վրա

Համակարգչային կախվածությունը անչափահասների շրջանում կարող է հանցավոր վարքի (արատավոր ցանկություններ, կասկածամտություն, ստախոսություն, հակամարտություն և այլն) դրսևորման պատճառ դառնալ, առաջացնել լքվածության, տագնապի զգացում: Ֆիզիկական առողջությունը նույնպես տուժում է: Գիտնականները պարզել են, որ նստակյաց կյանք վարելը հանգեցնում է երիկամների հիվանդության, որը բնորոշվում է դրանց գործառույթների շարունակական նվազմամբ :Համաձայն հետազոտությունների արդյունքների՝ նստակյաց կենսակերպը բերում է բազմաթիվ հիվանդությունների զարգացման՝ այդ թվում շաքարախտի, սրտամկանի ինֆարկտի և քաղցկեղի: Համակարգիչը նյարդային համակարգի խնդիրներ է առաջացնում: Համակարգչային խաղերով տարված մարդու մոտ կարող են առաջանալ սրտանոթային համակարգի, ստամոքսաղիքային տրակտի խանգարումներ և ճարպակալում:Պարբերաբար համակարգչից օգտվելը մարդու մոտ առաջացնում է կեցվածքի փոփոխություն՝ ողնաշարի ծռումներ, կուզ և, իհարկե, տեսողության վատացում: Կարճատեսությունը համատարած բնույթ է կրում: Հեռուստաէկրանին նայելուց լարվում են աչքերը, իսկ եթե դա երկար է տևում աչքերի ծանրաբեռնվածությունը դառնում է չափից ավելին: Եթե չձեռնարկել միջոցներ, ապա տեսողության հետ խնդիրները անխուսափելի կդառնան: Գիտնականներն ապացուցել են, որ համացանցից կախվածությունը թուլացնում է օրգանիզմի դիմադրողականությունը: Նույնիսկ եթե դեռահասը համակարգչում ծախսում է ոչ ավելի,

քան մեկ կամ երկու ժամ, նա ունի ընդհանուր հոգնածություն, եւ հատկապես, հոգնածությունը տեսողական է:

4 *Խորհուրդներ դեռահասներին և ծնողներին*

- Տրամադրել օրական երկու ժամից ոչ ավել: Տեղադրել համակարգիչը այնպես, որ հնարավոր լինի հսկել, թե ինչքան ժամանակ է անցկացնում սովորողը համակարգչի առջև և ինչպիսի կայքեր է այցելում:
- Համակարգչի մոնիտորն անհրաժեշտ է տեղադրել այնպես, որ այնգտնվի աչքերի մակարդակին, էկրանի և աչքերի միջև հեռավորությունը կազմի 50-60 սմ: Հեռուստատույցի էկրանի և դիտողի միջև հեռավորությունը պետք է կազմի առնվազն 2-2,5մ: Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է հաճախ ընդմիջումներ անել և կատարել աչքերի համար վարժություններ:
- Քնի խանգարումները կանխարգելելու նպատակով պետք չէ տեղադրել համակարգիչը, հեռուստացույցը երեխայի ննջասենյակում:
- Անհրաժեշտ է նախազգուշացնել դեռահասին, որ համացանցում տեղադրված տեղեկատվությունը երբեմն վստահելի չէ:
- Երբեք չի կարելի համացանցով տրամադրել անձնական տվյալներ՝ տան հասցե, հեռախոս, հաշվեհամար, անձնական նկարներ: Պետք չէ հանդիպել այն մարդու հետ, ում ճանաչում են միայն համացանցով: Պետք է խրախուսել ծնողներին ազատ ժամանակն անցկացնել երեխաների հետ առանց հեռուստատեսության և համակարգչի՝ զրուցելով, զբոսնելով, մարզվելով և այլն:

Մաս 3

1. Գիրք, հեռուստացույց, համակարգիչ...

Ժամանակակից երեխաները հայտնվում են ոչ հեռավոր անցյալում եղած միջավայրից շոշափելիորեն տարբեր միջավայրում, որը հագեցած է տարաբնույթ տեխնիկական միջոցներով: Արդեն սովորական դարձած ռադիոյի, հեռուստացույցի ու վիդեոյի կողքին հայտնվում են համակարգիչը, կառավարման համակարգերով եւ պատկերային միջոցներով օժտված բազմազան խաղալիքներ: Հավանաբար այս ամենը քիչ-քիչ կփոխի մեր ավանդական պատկերացումները կրթության ու գրագիտության մասին: Ու թեեւ արդեն ակներեւ է, որ տեխնոլգիական դարաշրջանի սովորողները դատապարտված են գործ ունենալու ավելի շատ էլեկտրոնային գրությունների տեսքով ներկայացվող, քան թղթի էջի վրա զետեղված «տպագիր» նյութի հետ, այնուամենայնիվ՝ կրթական-մշակութային միջավայրում շարունակում է կարեւոր դեր խաղալ տպագիր գիրքը: Համեմատությունները գրքի, հեռուստացույցի եւ համակարգիչի միջեւ, սրանցից մեկի կամ մյուսի առավելությունների կամ պակասությունների քննարկումը հեղինակների կողմից մեծ ուշադրության արժանացած թեմաներից է: Համակարգիչը, իհարկե, ավելի հետաքրքրական է, քան գրքերի հատորները, կարդում ենք "Technology 2001" գրքի "A World to Understand: The Future of Computing and Communication" գլխում, եւ ավելի շատ նման է հեռուստացույցի: Բայց հեռուստացույցն անհամեմատ ավելի վատ ուսումնական միջավայր է եւ ցավոք, համակարգիչ օգտագործելը ավելի ու ավելի նման է դառնում հեռուստացույց դիտելուն: Գիրքը ներկայացնում է արդեն պատրաստի աշխարհ եւ ազդելու ավելի քիչ հնարավորություն ունի, քան համակարգիչը, որն օգտագործողին ներքաշում է իր մեջ՝ առաջ բերելով միջավայրի եւ օգտագործողի աննախադեպ փոխկապակցվածություն եւ գործելու աներեւակայելիորեն հարուստ դաշտ: Սա էլ իր թերություններն ունի. միջոցների առատությունը խանգարում է կենտրոնանալու մի բանի վրա, երբ անհրաժեշտ է հաղթահարել որեւէ խոչընդոտ [1]: Այստեղ է, որ առանձնահատուկ կարեւորություն է ստանում ոչ թե ուսումնական նյութը, այլ ուսուցման եղանակը: Կարեւորը այն չէ, թե ինչ են սովորում, այլ այն թե ինչպես են սովորում: Ն. Նեգրոփոնթեի կարծիքով, օրինակ՝ նոր տեխնիկական միջոցները ուսման նպատակներին ծառայեցնելու փորձերը դատապարտված են ձախողման, քանի դեռ համակարգիչը սահմանափակված-հանգեցված է տեսալսողական սարքերով հեռավորության վրա ուսուցման գործիքի, որ պարզապես ուսուցիչներին ավելի գործուն, իսկ սովորողներին ավելի կրավորական է դարձնում: Մինչդեռ համակարգիչն առաջին

անգամ հնարավորություն է տալիս, որ «անելով սովորելու» սկզբունքը դառնա կանոն:

2. *Հին եւ նոր սերունդներ*

Փոխակերպված միջավայրում, որտեղ սովորողներին մատչելի են նորանոր ծառայություններ ու փորձառություններ՝ նրանք մեծանում են իրենց ծնողներից տարբեր ձեւերով: Սա պատճառ է դառնում խզումների մեծահասակների ու սովորողների՝ ծնողների ու զավակների, ուսուցիչների ու սովորողների այսօրվա սերունդների միջեւ, որ հանգեցնում է հասարակական մեծ փոփոխությունների: Տեղեկատվությամբ հեղեղված հասարակության մեջ տեխնոլոգիայի եւ մշակույթի միջեւ հարաբերությունները դուրս են եկել մեծահասակ սերնդի հսկողության շրջանակից: Համակարգիչ օգտագործող սովորողների ծնողները հաճախ հարց են տալիս թե՝ այդ ի՞նչ է, որ իրենց երեխաները գիտեն, իսկ իրենք՝ ոչ:

Արդեն ակներեւ է, որ տեղեկատվական դարաշրջանի առավել նշանակալից փոփոխությունները կկատարվեն հասարակական ոլորտում, կունենան ընկերային բնույթ եւ դրանց ակունքները արդեն առաջանում են այսօրվա երեխաների փորձառության մեջ: Ինչպես եւ պատմության ընթացքում կատարված ուրիշ մեծ փոփոխությունների ժամանակ՝ երեխաները կլինեն գալիք տարիների շահողները կամ զոհերը: Շատ բան, այդ թվում՝ նրանց դժվարությունները եւ պատեհությունները կախված կլինեն նոր միջավայրին հարմարվելու նրանց կարողությունից: Եթե մենք այսօր ի վիճակի լինենք հասկանալու այս փոփոխությունների բնույթն ու միտումները, գուցե եւ կարողանանք կայացնել մեր երեխաների ապագայի հետ կապված լավագույն վճիռները:

Եզրակացություն

Նորարարական տեխնոլոգիաների համատարած ներդրումը պայմաններ է ստեղծում դպրոցականների կրթության որակի, ճանաչողական գործունեության և կրթական մոտիվացիայի բարձրացման համար: Բոլոր տեխնոլոգիաները, որոնք կստեղծվեն ապագայում, կկոչվեն երրորդ հազարամյակի կամ էլ XXI դարի տեխնոլոգիաներ:XXI դարը բեկումնային կլինի մարդկության զարգացման համար: Հետևաբար, վերը նշված խնդիրները պահանջում են բոլորի ուշադրությունը՝ փիլիսոփաների, տնտեսագետների, հոգեբանների, սոցիոլոգների, քաղաքական գործիչների և իհարկե՝ մանկավարժների:Փոխակերպված միջավայրում, որտեղ սովորողներին մատչելի են նորանոր ծառայություններ ու փորձառություններ՝ նրանք մեծանում են իրենց ծնողներից տարբեր ձեւերով: Սա պատճառ է դառնում խզումների մեծահասակների ու երեխաների,սովորողների՝ ծնողների ու զավակների, ուսուցիչների ու սովորողների այսօրվա սերունդների միջև, որ հանգեցնում է հասարակական մեծ փոփոխությունների: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները հսկայական ազդեցություն ունեն մարդու և հասարակության ամենօրյա կյանքի վրա: Դրանց խտացված դրսևորումը համացանցն է, որը դարձել է մարդու ինքնության և հոգեկան առողջության ձևավորման կարևոր գործոններից մեկը: Դրա ազդեցությունը դեռ քառսային է և դեստրուկտիվ, քանի որ մարդիկ դեռ չեն տիրապետում տեղեկատվությունն անվտանգ կիրառելու կանոններին: Սրա արդյունքում փոխվում է ողջ հասարակական հարաբերությունների համակարգը, դրանում առաջանում են ճգնամեր և շեղումներ: Ամենաակնհայտ ճգնաժամերից է ինքնության ճգնաժամը, իսկ ամենացայտուն շեղումներից՝ փախուստը պատասխանատվությունից:Տեղեկատվությամբ հեղեղված հասարակության մեջ տեխնոլոգիայի և մշակույթի միջեւ հարաբերությունները դուրս են եկել մեծահասակ սերնդի հսկողության շրջանակից: Արդեն ակներև է, որ տեղեկատվական դարաշրջանի առավել նշանակալից փոփոխությունները կկատարվեն հասարակական ոլորտում, կունենան ընկերային բնույթ եւ դրանց ակունքները արդեն առաջանում են այսօրվա երեխաների փորձառության մեջ: Ինչպես և պատմության ընթացքում կատարված ուրիշ մեծ փոփոխությունների ժամանակ՝ սովորողները կլինեն գալիք տարիների շահողները կամ զոհերը: Շատ բան, այդ թվում՝ նրանց դժվարությունները եւ պատեհությունները կախված կլինեն նոր միջավայրին հարմարվելու նրանց կարողությունից: Ժամանակակից տեխնոլոգիաների ճնշման տակ կատարվող հոգեբանության փոփոխությունները

առաջիկայում կարող են հանգեցնել լուրջ հետեւանքների թե՛ սովորողների, թե՛ նրանց ծնողների համար: Այդ խնդրով անհրաժեշտ է զբաղվել այսօր, հօգուտ ապագայի, հօգուտ սովորողի: Եթե մենք այսօր ի վիճակի լինենք հասկանալու այս փոփոխությունների բնույթն ու միտումները, գուցե և կարողանանք կայացնել մեր երեխաների ապագայի հետ կապված լավագույն վճիռները: Հարկավոր է սահմանափակել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը մարդու վրա, ինչի շնորհիվ հնարավոր է ունենալ հոգեկան հավասարակշռություն և ինքնության ձևավորման բնականոն գործընթաց:

Գրականության ցանկ

Բալյան Ա.Ա. «Մանկավարժական հոգեբանության հարցեր» -Երևան: Լույս, 1983.

Դուբովսկայա «Երեխան հեռուստացույցի մոտ»

Մանտուլենկո Վ. «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»

Մեթոդ. ձեռնարկ «Դեռահասների առողջություն և զարգացում» Երևան 2014

Միրաքյան Վ. «Ագրեսիվ հեռուստատեսության» հետևանքները

Նալչաջյան Ա. Ա. «Հոգեբանության հիմունքներ»-Երևան 1997